

4087

229

1772

891.71

7-87

Ի. ՎՈՏԱՊԵՆԿՈ

209


N^o 1365

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

Թարգմանեց

Գիւտ քահանայ Աղանեանց

(Արտատպած „ԼՈՒՄԱՅ,, գրական հանդիսից).




Տ Փ Խ Ի Ս

Տպարան Մ. Շարանի եւ Բեկ. Նիկ. 21.

Тип. М. Шарадзе и К^o.

1896



2003

2003

891.71
7-87
www.

Խ. ՊՕՏԵՊԵՆԿՈ

Մ 1365

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

Թարգմանեց

Գիտ քահանայ Աղանեանց

(Արտատպած „ՆՈՒՄԱՅ“, գրական հանդիսից)。



1796

Տ Փ Խ Ո Ս

Տպարան Ս. Շարանձի եւ Ընկ. Նիկ. 21.

Тип. М. Шарадзе и К°.

1896



37575 1/2

20815

20815

Дозволено цензурою Тифлисть, 20 Декабря 1895 г.



(4819-50)

21288-609

2011

բնագիր ի յատուկ դո ցրմանի տակ մի քանի մանկան
պատկանող ամ ցարդան բոլորն առաջ լազմի միջև
բնակարան միջատա ճարտար բնակարան բոլոր զի իսկ
ի զանաւ ուղիս հետեւցող զի բոլորն առաջ մանկ
-տ մի ի հետեւն զի իսկ իմաց զիստաւ մանկիւ առաջ
իսկնողաց ամ մանկուն ախար զի մանկունացն միջատ
-գիտարան իման զիստաւ մանկուն զիստաւ զիստաւ
-աղ ամ զգնտեղացի ուր զի մանկունացն բնակա զի իսկ
-գնտա միջի բոլորն զիստաւ մանկուն զիստաւ զիստաւ
իսկնողացն միջի հետեւցող միջատն զգն մ զգ
հետեւն իսկնողացն մանկուն իսկնողացն հետեւն իսկ
միջատ զի մանկունացն մանկուն առաջ ամ
միջի Մորենտ Դեմենտելի Ալեքսի լաւ մարդ էր. այս
բանին բոլորովն համաձայն էին այն ամենքը, որոնք
հանաչում էին նորան և զործ էին ունեցել նորա հետ:
Դոնէ միշտ, երբ նորա մասին խօսը էր լինում, ասում
էին. ճարտար զգնմի միջատ միջատ միջատ զիստաւ
միջատն զիստաւ զիստաւ զիստաւ զիստաւ զիստաւ
էէ... ի հարկէ. ի հարկէ. ի հարկէ. ի հարկէ. ի հարկէ.
մարդ է: ասար իսկնողացն զիստաւ միջատ զիստաւ
Թէ իսկապէս ինչ էր հասկացում «միայն... էէ...»
անորոշ արտայայտութիւններից, ոչ մի հնար չկայ եր-
կու խօսքով բացատրելու: Աւելի դժուար է պատկեր-
ցանել այնպիսի մի ըստ երևութին հասարակ բան, ինչ-
պէս այն փառքը, որ Ալեքսի լաւ մարդ էր: Այս պատ-
ճառով անհրաժեշտ է պատմել զործի էութիւնը:
Այն ժամանակ, երբ ամենքը միաբերան հաստատում
էին, թէ «Ալեքսի լաւ մարդ է, միայն» և այլն. նա քա-
ռասուն տարեկան էր: Նա ման էր գալիս արագ, զործի
տէր մարդու քայլերով, այնպիսի քայլերով, ինչպէս ման են
գալիս յանձնակատարները, նամակաբերները և լրատուները,
բայց նորա քայլերը մի փոքր անհաստատ էին երևում,

այսինքն հէնց այն յատկութիւնը, որ յատուկ է իրանց ոյժերի վերայ հաւատ չունեցող մարդոց: Նա բարձրահասակ էր, բայց չափազանց կռացած, առաջին հայեացքից մինչև անգամ սապատող էր կարծուում. սորա համար էլ նորա երկայն հասակը բանի տեղ չէր անցնում և մի առանձին ազդուութիւն չէր տալիս նորան: Նա շարունակ կրում էր երկայն սև թիկնոց և ամառ ձմեռ կառավարւում էր առանց վերարկուի: Իւր այս վարմունքը նա բացատրում էր կատարեալ արհամարհանքով դէպի տարերքը և երբ ամառուան շոգերին հարցնում էին նորան, թէ չէ՞ շոգում արդեօք, իսկ ձմեռուան ցրտին՝ թէ չէ՞ մրսում, նա միշտ միևնոյն պատասխանն էր տալիս.

— Դատարկ բան է: Մարդ պէտք է վեհանձն լինի: Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ աւելի պարզ է բացատրւում և մինչև անգամ այնքան պարզ, որ խօսել չարժէ այդ մասին: Եթէ ոտրա վերայ աւելացնենք, որ անդրավարտիքի ստորին եղերքը գզգզուած էր, որից նա նմանում էր թաթաւոր սագին, իսկ կօշիկները կրունկները ներս էին ծռուած, արդէն Մոդէստ Ալօեվի արտաքին տեսքի նկարագրութեանը էլ պակաս բան չի մնալ:

Եթէ նայէիր նորան մէջքի կողմից, նա քեզ վերայ մի ահագին, ամրակազմ, թիկնաւետ, առողջակազմ և ուժեղ մարդու տպաւորութիւն կ'գործէր, որովհետև բնութիւնը նորան տուել էր լայն թիկունք, բարձր ուսեր, հաստ վիզ, երկար և մեծ մեծ ձեռքեր, այդ բաւական չէր, դեռ ինքն էլ երկար սև մազեր էր թողել, որոնք իրանց կոպտութեան պատճառով ձիու մազի կեղծամին էին նմանում, որպիսին գործ են ածում դերասանները գաւառական ամենախղճուկ ներկայացումներին: Բայց արժէք միայն առաջ վազել և նորա կերպարանքին նայել, արդէս զի իսկոյն ակներև լինէր, որ Մոդէստ Ալօեվը ա-

մենակն չէր անցրել այն ձիրքերը, որ բնութիւնը տուել էր իրան: Բանից երևաց, որ նորա կուրծքը ներս է ընկած, իսկ դէմքը, փոքրիկ քթով և բերանով, մանրիկ աչերով, գունատ, կախընկած այտերով, որոնց նիհարութիւնը անկարող էին ծածկել անօտ, սև, ուղիղ դուրս ցրցուած ծնօտամօրութեանը, — այդ դէմքը պարզ արտայայտում էր եթէ ոչ քաղց, գոնէ կիսասոված դրութիւն:

Այսպիսի էր Մոդէստ Ալօեվի արտաքինը. իսկ ինչ վերաբերում է նորա ներքին յատկութիւններին, մի բան միայն կարելի էր ասել առ այժմ. որ նա լաւ մարդ էր, միայն... էէ... այլ սակայն նա լաւ մարդ էր:

Բայց ժամանակ կար, երբ Մոդէստ Ալօեվի մասին ասում էին լոկ, թէ նա լաւ մարդ է, և ոչ մի թերութիւն չէին կայցնում, պարզ ասում էին լաւ մարդ է, և վերջացաւ: Այս այն ժամանակն էր, երբ նորա մայրը կենդանի էր, մի շատ պառաւ և խիստ յարգուած կին, գնդապետի այրի, որ մինչև իւր վերջին օրը կենսաթոշակ էր ստանում, և ահա այս իսկ վերջին հանգամանքում էր բոլոր գաղտնիքը: Պառաւ և յարգելի կինը, գնդապետի այրին կենսաթոշակ էր ստանում, ուստի և Մոդէստ Ալօեվը ունէր բնակարան և ճաշ, — երկու բան, որոնք միանգամայն անհրաժեշտ են ամեն մի կարգին մարդուն: Բնակարանը գտնւում էր Պետերբուրգեան կողմի մի շատ հեռաւոր մասնում և շատ վատ էր, ճաշը համեստ էր և խղճուկ, և որ ամենից անտանելի էր — թէ բոլոր չորս պատերին և թէ չորերշաբթի ուրբաթ պատուայ էր. բայց նորա ունեցած չունեցածը բնակարանն ու սնունդն էր, իսկ Մոդէստ Ալօեվը պարտաւորւում էր մտածել նաև հագուստի համար:

Բայց այս խնդիրն էլ թեթեւացաւ նորա համար այն հանգամանքով, որ նա մի մեծ եղբայր ունէր, որը երբեմն երբեմն առնում էր նորա համար կամ անդրավարտիք,

կամ բաճկոն, կամ գլխարկ և կամ կօշիկ։ Այսպիսով Մոզէստ Ալօեվը այդ բաղաձայնով ժամանակներում վստահ կարող էր ապրել աշխարհում, ոչ մի վնաս չհասցնելով մերձաւորին. այս պատճառով նորա ծանօթները պնդում էին առանց որ և է յաւելումի, թէ նա լաւ մարդ է։

Սակայն գնդապետի պառաւ և յարգելի այրին պէտք է վաղ թէ ուշ մեռնէր, որ և վերջապէս կատարեց, և ահա իսկ և իսկ այդ ժամանակից Մոզէստ Ալօեվը պարտաւորեալ էր կեանքի ասպարէզը ոտք կոխել մի կտոր հաց գտնելու նպատակով։ Պարզ բան է — մի կտոր հաց երկրագնդի երեսին փոքր քանակութեամբ միշտ կայ պատրաստ և ամեն մի կտոր իր տէրը ունի, և եթէ յանկարծ հանդէս է գալիս մի նոր խնդրակ, որ առաջ կենսաթոշակով էր սնւում, նորան ուրիշ բան չէ մնում, բայց եթէ իւր որոնած կտոր հացը մերձաւորի ձեռքից խլել։ Այս պատճառով էլ այն խօսքերին, թէ Մոզէստ Ալօեվը լաւ մարդ է, այժմ սկսեցին զանազան պոչեր կաշնել։

Սակայն հենշտ է արդեօք հաց գտնել այն մարդու համար, որի մասին աւանդութիւնն առում էր, թէ այսինչ ժամանակ այսինչ հաստատութեան մէջ հասաւ մինչև երրորդ դասարան, իսկ որի կրթութեան շարունակութեան մասին աւանդութիւնը ամենևին ոչինչ չէր առում... Ոչ, հեշտ չէ։ Բայց սակայն Մոզէստ Ալօեվը այն կարծիքի էր, թէ մինչև մարդ ձեռք չբերէ մի կտոր հաց, ամենևին չէ կարող այն ուտել, ուտի և ոչ մի բանի ուշ չդարձնելով սկսեց հաց ձեռք բերելու վերայ մտածել։

Նորա առաջին գործն այն եղաւ, որ գնաց եղբօր մօտ։ Ղուկաս Գեմեմտեփիչ Ալօեվը կենում էր Լիտէյնի հրապարակի վերայ Կիրօճնոյից ոչ հեռու, և շատ էլ լաւ չէր ապրում, բայց ոչ էլ շատ վատ։ Գոնէ նա ամեն ինչ ունէր, թէ հագուստ, թէ տաք բնակարան, թէ փափուկ կարասի բնակարանում, կուշտ ճաշ, կին, որդիք, մինչ-

գեռ Մոզէստ Ալօեվը սոցանից ոչ մէկը չուներ։ Մոզէստը եկաւ եղբօր մօտ ու ասաց. — Գիտես, Ղուկաս, որ մայրիկը մեռաւ, նորա հետ մեռաւ և կենսաթոշակը։ Ես ոչինչ չունիմ։ Իսկ դու, Ղուկաս, սեպհական աշխատութեամբ ձեռք ես բերում թէ հաց և թէ ուրիշ ինչ որ պէտք է։ Ինձ էլ սովորեցրու այդ արհեստը...

Ղուկասը նայեց Մոզէստին, ուշադրութեամբ և անթարթ նայեց ու ասաց.

— Տեսնում ես, Մոզէստ, ի՞նչ հարկէ ամեն մարդ պէտք ունի հաց և այլ ինչ աշխատելու, ուրեմն նաև դու։ Բայց այդ արհեստը հեշտ չէ և կապուած է բազմաթիւ դժուարութիւնների հետ։ Եւ ինչպէս ես քեզ տեսնում եմ, ինձ թւում է, թէ դու անընդունակ ես այդ բանին։ — Ի՞նչպէս թէ անընդունակ։ Ինչո՞ւ եմ անընդունակ։

— Ապացոյցներ չկան։ Ինքդ դատիր. ես թատերագիր եմ և կապեր ունիմ թատրոնական աշխարհի հետ։ Բայց ի՞նչ գործի կարող եմ քեզ դնել, Մոզէստ։ Պարի համար դու պիտանացու չես, որովհետև ոտներդ մեծ մեծ են և անհաստատութիւն է նկատուում նոցա մէջ։ Դերասան չինել քեզ չի կարելի, որովհետև քո լեզուդ ամենաէական չորս բաղաձայները չունի. դու չես կարող արտասանել ինչպէս հարկն է ոչ ը, ոչ լ, ոչ շ, և ոչ Ժ... Ի՞նչ տեսակ դերասան կլինես։ Ես քեզ կյանձնէի օտարագրի պիէսներ թարգմանել, որոնցից տասը տարի է ահա ինչ որ ես յաջողութեամբ օգտուում եմ ռուսերէն ողբերգութիւններ գրելիս, բայց դու լեզուներ վատ էիր սովորում և հազիւ թէ որ և է բան յիշես։ Արտադրելու կտայի, բայց էլի արգելք կայ. ես ինքս էլ ճիշտ չեմ գործ դնում եւտ տառը, իսկ դու առաւել վատ... Ես միշտ այնպիսի զրազէտ արտազրոգ եմ որոնում, որ գիտե՛նայ այդ... Էլ ի՞նչ կարող եմ քեզ համար հոգալ։

Մողէստը մտածմունքի մէջ ընկաւ։ Այս ամէնը ստոյգ էր, նա ոչինչ չգիտէր և ոչինչ չէր կարող։ Այնուամենայնիւ այս խոստովանութիւնից նորա անորժակը ամենեւին չպակասեց, և երկար մտածելուց յետոյ նա ասաց.

— Ինչպէս գիտես, բայց միայն ես քեզ մօտ կմնամ, որովհետեւ էլ ուրիշ տեղ չունեմ...

Ինչպէս ասաց, այնպէս էլ արեց։ Ղուկասը ուռչում էր և կնճռում, բայց սիրտ չարաւ նորան դուրս անել նախ՝ նորա համար, որ ինչ և իցէ եղբայր էր, իսկ երկրորդ էլ, որ հասարակաց կարծիք կար։

Մողէստը ասլորում էր, այսինքն՝ քնում էր, ուտում, զբօսնում և ապագայի մասին մտածում։ Նա ազատ ժամանակ շատ ունէր, ուստի և նորա մտածմունքներն էլ բարդ էին և բազմազան։

Նա մտածում էր. «Ինչպէս է իմ եղբայր Ղուկասը վարպետութեամբ հաց դատում։ Ես հաւատարմ գիտեմ, որ նորա գիտութիւնը իմից մի քիչ աւելի է։ Ես երրորդ դասարան հասայ, իսկ նա հինգերորդ, — մեծ բան է ինչ է։ Նա ինքն էլ հէնց ասում է, որ շատ բաւ չգիտէ եւտ տառը գործ դնել։ Այն ինչ համեցէք տեսէք — պիեսներ է գրում, ներկայացնել է տալիս թատրոններում և սորա համար փող է ստանում։ Եթէ ասենք, թէ նա առանձին խելք ունի... բայց չէ, ամենեւին այս բանը նորա մէջ չէ նկատուել։ Ընդհակառակը, ուսումնարանումն էլ, տանն էլ ամենքը նորան շատախօս են համարել, ինչպէս և ինձ, Մողէստիս։ Ո՛չ, այստեղ ուղղակի մի գաղտնիք կայ, և պէտք է խմանալ թէ ինչ է այդ»։

Եւ Մողէստն սկսեց քրքրել Ղուկասի այդ գաղտնիքը։ Դիցուք թէ Ղուկասը նստած էր լինում իւր մենաբանում, պարապմունքի մէջ մտախոհ, Մողէստն թէլ տեսար կմանէր կամացուկ։

— Զէ, ոչինչ, ես քեզ չեմ խանդարի, ես միայն թեք

կրնկնեմ այստեղ տախտի վերայ... կասէր նա և թեք կրնկներ։ Պարկում էր իր համար և կարծես նայում էր առաստաղին, բայց իսկապէս նա Ղուկասին էր նայում։ Ղուկասի հոգը չէր։ Նորա առաջ դրած է գերմաներէն մի գրքոյկ. նայում է գրքին և ինչ-որ գրում, կրկին նայում է և կրկին գրում։ «Էհէ, մտածում է Մողէստը, — այ թէ ինչպէս է նա պիեսներ շարադրում. պէտք է աչքի առջև ունենալ այս»։ Այսպէս նա մի շաբաթ դիտեց, մի անգամ էլ մտաւ մենարանը, երբ Ղուկասն այնտեղ չէր, մօտեցաւ սեղանին և տեսաւ, որ գերմաներէն գրքում գերմաներէն պիես է, իսկ տետրակում՝ ռուսերէն։ Գերմաներէն պիեսի վերնագիրն էր — Աստուած գիտէ թէ ինչ, իսկ ռուսերէնինը՝ «Լուութիւն։ Գաւառական պատկերներ։ Փոխադրութիւն»։ Մողէստը խելքն ու միտքը լարեց և քանի մի բան յիշեց իւր ուսած գերմաներէնից։ Կարդում է և տեսնում, ուր որ գերմաներէնում Ադօլֆ Զմիտ էր գրած, Ղուկասի տետրում Իվան Պետրովիչ Զկուրին էր, ուր որ գերմաներէնում Լուիզա Զպայզէն էր, Ղուկասի մօտ — Զինայիգա Սերգեննա Գուպիդոնով էր, ուր Զմիտն ասում էր. «գուտ մօրգէն», այնտեղ Իվան Պետրովիչ Գօրսկին. «բարեւ» էր ասում, ուր որ Լուիզա Զպայզէնը ձայնում էր. «իհ լիբէ դիհ», այնտեղ Զինայիգա Սերգեննան. «միշտ քեզ անձնուէր» էր ասում։

«Է՛, մտածեց Մողէստը, ահա թէ ինչումն է եղել բոլոր գաղտնիքը, այ թէ ինչ կնշանակէ պիեսներ փոխադրել։ Վերցնել և ուղղակի... թարգմանել։ Հմ... Զատ հասարակ մի բան։ Այդ հօ ես էլ կարող եմ անել... Հարկաւոր է միայն որ մի քիչ լեզուներ սովորեմ, քիչ ու միշ յիշեմ»...

Եւ նա սկսեց եռանդով կրկնել լեզուները և քիչ ու միշ յիշել։ Նայում էր նորան Ղուկաս եղբայրն ու զարմանում. «միթէ սորանից բան դուրս կ'գայ։ Ա՛յ քեզ

հրաշք. — դեռ շարունակ պարկած էր տախտի վերայ և առաստաղին էր նայում, իսկ այժմ յանկարծ անձնատուր է եղել մտաւոր պարապմունքին: Ինչպիսի մարդ է:

Երկու ամսից յետոյ Մողէստը իրան պատրաստ պղաց: Նա գնաց դրաւաճառանոց, քրքրեց այնտեղ և գտաւ մի նոր, թարմ պիես, որի վերայ գրած էր իրան բոլորովին անծանօթ հեղինակի մի անուն: Բայց պէտք է նկատել, որ նորան անծանօթ էր նաև միւս բոլոր հեղինակներին անունները: Առաւ նա ֆրանսիական պիեսը, եկաւ տուն և նըստեց նկուղում: Ղուկասի զարմանքը աւելի մեծացաւ. «Ինչ է անում նա այնտեղ: Միթէ իրաւ երեսուն և չորս տարեկան հասակում Մողէստը խելքի եկաւ և մի լուրջ գործի ձեռնարկեց»:

Բայց Մողէստը շարունակ նստած էր նկուղում և միայն ճաշելու էր դուրս գալիս: Նա պարապում էր մեծ եռանդով: Ժան դը-Բէֆերն ու Լուի Կավերնաները շատ հասարակ կերպով փոխւում էին նորա մօտ Սիմէօն Պետրովիչ Բրինկլինների և Ֆէօդօր Իվանիչ Կավլերգովների, Սիւզանին նա դարձնում էր Արին, իսկ Մարգարային՝ Ստեփանիդ: Թարգմանութիւնը դուրս եկաւ ճիշտ, բառացի, եթէ չհաշուենք այն տեղերը, որոնք չհասկանալուց աղճատուած էին: Պիեսը վերջացած էր: Վերնագրի համար Մողէստն ընտրեց այս առածը. «Զխաբես՝ չես ծախի», դրեց «փոխադրութիւն», ստորագրեց խոշոր տառերով «աշխատասիրեց Մողէստ Ալօեվ» և հրապարակ հանեց:

Երբ պիեսը նորա ձեռքից ելաւ և պատշաճաւոր ընթացք ստացաւ, Մողէստը համարեան հանդիսավեհ կերպարանքով բացուեց իւր եղբօր առաջ.

— Դիտե՛ս, Ղուկաս, ես պիես հեղինակեցի, ասաց նա:

Ղուկասը զարմանքից մի քանի քայլ յետույեւ գնաց:

— Դու: Հեղինակեցիր: Հա, հա, հա: Միթէ դու հեղինակելու չնորհ ունիս:

— Ինչո՞ւ չունիս: Զէ՛ որ դու էլ ես շարադրում: — Հի... հա... Բայց այդ ուրիշ բան է բոլորովին...

— Բայ լաւ... Մի քիչ սպասիր, կտեսնես...

Ղուկասը լաւ համարեց սպասել: Պիեսը արդէն յաջողութիւն գտնելով յետ դարձուեց Մողէստին և դարձեալ ուղարկուեց ուր հարկն էր: Կարդացին, քննեցին ու գտան, որ յիրաւի վատ պիես չէ: Մեզ յայտնի չէ, ճշմարիտ վատ չէր, թէ ձեռնհաս մարդկանց թւում էր այդպէս, որովհետև շապկի վերայ Ալօեվի անունը կար գրած, մի անուն, որ յաճախ կրկնւում էր թատրոնական շրջանում: Ամենքը իմանում էին, որ Մողէստ Ալօեվը պէտք է Ղուկաս Ալօեվի եղբայրը լինէր և որ եթէ Ղուկաս Ալօեվը յաջողութեամբ փոխադրութիւններ էր անում, էլ ինչու նոյնը չէր կարող անել և Մողէստ Ալօեվը:

Հասաւ նոյն իսկ այն օրը, երբ Ղուկասին անպատմելի զարմանք էր տիրել, տեսնելով յայտարարութեան վերայ իւր ազգանունը, որից առաջ սակայն ոչ թէ «Ղուկաս» էր դրուած, այլ «Մողէստ»:

— Սատանան գիտէ թէ այս ինչ բան է, ասաց նա բարձր ձայնով: — Ճարահատեալ պէտք է հաւատալ, որ Մողէստի վերայ չնորհ է իջել:

Պիեսը լաւ գնաց, հասարակութիւնը ծափահարեց, քննադատները գովաբանեցին, տնօրէնները մէկ մէկու ձեռքից խլում էին, Մողէստը լաւ սիրուն գրպանն էր ծողովում ներկայացումների վարձը: Մի խօսքով գործը այնպէս փառաւոր էր գնում, որ Մողէստը չէր էլ երազել: Նա կարծում էր, թէ իրան մի չնչին բան կհասնի, իսկ յանկարծ, արի տես, բարիքը հեղեղի պէս սկսաւ թափուիլ նորա առաջ: Ղուկասն անգամ սկսաւ նորան նախանձել:

— Այս տեսակ յաջողութիւն աչքով էլ չեմ տեսել երբէք, չնայելով որ այսքան փորձուած եմ այս գործում:

Մի կտոր հաց ունիմ, ով գիտէ այն էլ խնայ իմ ձեռքից...

... Բայց Մողեստը առատօրէն վայելում էր փառքի ու բարիքի շնորհները, փոխադրուեցաւ մի առանձին բնակարան, իր սեպհականը, էլ ոչինչ չէր ուզում իմանալ և լսել: Նա գնաց գրավաճառանոց և սկսեց մի նոր պիես որոնել, որպէս զի նորա տակն էլ ստորագրէ «աշխատասիրեց Մողեստ Ալօեվ»: Բայց այդ միջոցին մի դէպք պատահեց, որ ցնցեց նախ և առաջ Ղուկասին, ապա Մողեստին ու վերջ ի վերջոյ սորա փառքն ու բարեկեցութիւնը փտանգի ենթարկեց:

Մի անգամ եկաւ Մողեստի մօտ Ղուկասը խիստ յուզուած կերպարանքով և, անխօս՝ գրպանից հանելով լրագրի մի թերթ, տուեց եղբօրը և կատաղի կերպով ասաց.

— Կարդա:

Մողեստն սկսեց կարդալ: Լրագրում հետեւեալն էր գրած. «Մօտ օրերս լոյս է ընկել մեզանում մի նորագոյն թատերագիր Մողեստ Ալօեվ անունով: Մենք միշտ այն կարծիքի էինք, որ օտար պիեսները ռուսական բարբերին յարմարացնելու համար բաւական է միայն Ղուկաս Ալօեվը: Այնուամենայնիւ մենք ծափահարում էինք «Ձխաբես՝ չես ծախի» ի հեղինակին, որովհետեւ պիեսը տաղանդաւոր և հետաքրքրական էր թւում: Բայց ինչքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ իմացանք, որ այս պիեսը, որը Մողեստ Ալօեվի ստորագրութիւնն է կրում, բառացի, այն էլ շատ խայտառակ թարգմանութիւնն է Ֆրանսիական թատերագրի պիեսի (այստեղ յիշուած էր ինչպէս թատերագրի անունը, այնպէս էլ պիեսի): Զատ երևոյթների ականատես էինք եղել, բայց այսպիսի անաւօթ գողութիւն կարծում էինք դեռ չէ պատահել գրականութեան մէջ: Զնորհաւորում ենք Ղուկաս և Մողեստ Ալօեվ եղբայրներին և ցանկանում ենք նոցա յաջողութիւն այսուհետեւ ես, բայց խորհուրդ ենք տալիս թատրոնական

վարչութեան չուտով հանել այդ դրուածքը պիեսների շարքից, որովհետեւ անվայել է մայրաքաղաքի բեմի վերայ տեսնել պարզ խաբերայութիւն...»

— Դու անասուն ես և յիմար: Աւելի ոչինչ. մեծաբան խօսքերով ասաց Ղուկասը: — Ինքդ ընկար և իմ անունն էլ արատաւորեցիր:

Մողեստը նայեց նորան և աչքերը յառեց:

— Այդ բոլորից ես բան չեմ հասկանում, պարզաստութեամբ ասաց նա:

— Ի՞նչպէս չես հասկանում: 2^է որ սա ճշմարիտ է: Դու թարգմանել ես և գրել, որ քո հեղինակութիւնն է... այդպէս չէ:

— Բոլորովին ճշմարիտ է:

— Ե՛, այդպիսի բան կանեն:

— Ի՞նչպէս չեն անի, անում են: 2^է որ դու էլ նոյնն ես անում, և ուրիշ ոչինչ... ինչո՞ւ ես չեմ կարող անել:

— Որովհետեւ դու յիմար ես... Ահա թէ ինչու... Մի-թէ ես թարգմանում եմ: Ես յարմարացնում եմ ռուսաց բարբերին, հասկանում եմ: Իմ գրուածքներից երբէք չի կարելի իմանալ, թէ որտեղից եմ ես գողացել. հէնց սորանումն էլ կայանում է արուեստն ու ստեղծական շնորհը... Հասկացա՞ր: Իսկ դու, ապուշ, վերցրել ես և թարգմանել և կարծել ես, թէ այդպէս էլ պէտք է...

Մողեստը սկսաւ քիչ շատ հասկանալ, թէ ինչո՞ւմն է տարբերութիւնը: — Բայց ի՞նչպէս անեմ, հարցրեց նա, երբ տեսաւ, որ յիրաւի խայտառակ բան է:

— Ինչպէս կամենաս այնպէս արա, իսկ ես էլ չեմ ուզում քեզ ճանաչել: Դու իմ գլուխս կտրեցիր, պատասխանեց Ղուկասը: Միայն այս մէկ բանը աչքի առաջ ունեցիր, — իսկոյնեթ մի որ և է լրադրում պատասխան տալիս, թէ յիրաւի նմանութիւնը կայ, բայց դա լոկ գաղափարների գուգաղիպութիւն է: Աւելացրու, որ դու քո

պիեսը գրել ես և բարեկամներիդ ու յարգողներիդ մօտ կարգացել տա՞ն տարի առաջ, մինչդեռ ֆրանսիական հեղինակը իւր գրութեանը լոյս է ընծայել միայն անցեալ տարի: Նկատիր, որ չէր կարող արդեօք նա քեզանից փոխ առնել... Տես նայիր, չը խառնես, ապուշ: Իսկ այնուհետև մնաս բարեաւ և երբէք աչքիս չերևաս: Ես քեզ էլ ամենևին չեմ ուզում ճանաչել: Հասկանում ես: Ամենևին:

Այս նշանաւոր խօսքերն ասելուց յետոյ Ղուկասը, որին Մողեստը միշտ մի բարեհոգի մարդ էր համարում, աչքերը գազանի նման չռեց, ատամները կրճատցրեց գայլի պէս և դուրս գնաց:

«Հմ... մտածեց Մողեստը, «երևի թէ ես էլ յիրաւի մի շարիք եմ գործել, որ Ղուկասն էլ այսպէս գազանի պէս է նայում:

Նա հետևեց եղբօր խորհրդին և լրագրներից մէկի մէջ մի նամակ տպեց, որի մէջ ասուած էր կէտ առ կէտ այն, ինչ որ Ղուկասն ասաց, այն է. դա լոկ գաղափարների գուգաղիւթութիւն է: Պիեսը գրուած էր և բարեկամների ու յարգողների մօտ կարգացուած քսան տարի առաջ (աւելի համոզելու համար Մողեստը ասար տարի էլ իրանից աւելացրեց) և ի հարկէ աւելի շուտով ֆրանսիացի հեղինակը կարող էր գողանալ Մողեստից, բան հակառակը: Յայտնի չէ ով և իցէ հաւատաց այս բացատրութեան, բայց շատերը ցոյց էին տալիս թէ հաւատացել են, իսկ մնացեալները շուտով մոռացան այս պատմութիւնը: Սակայն պիեսը էլ չերևեցաւ թատրոնի վերայ, Մողեստը էլ չէր ստանում ներկայացման վարձը և նորա դրութիւնը աննախանձելի էր դառնում:

Եղբօր մօտ գնալ նա սիրտ չէր անում, յիշելով, թէ ինչպէս նա իւր վերջին այցելութեան ժամանակ ատամներն էր կրճատեց: Նա ուղղակի վախենում էր, որ Ղուկասը, առողջ և ուժեղ լինելով, չծեծէր իրան: Մո-

ղեստը փորձեց մի պիէս էլ թխել, այս անգամ արդէն Ղուկասի հրահանգով, այսինքն «մշակուած»: Պիեսը պատրաստ էր և կարծես վատ չէր: Վերջապէս Մողեստը դրնաց իւր ծանօթ թատրոնական տնօրէնների մօտ և առաջարկութիւն արեց. բայց նորա տկանջ էլ չդրին:

— Ես ձեզ հաւատացնում եմ, որ այս պիեսը գրած է ինչպէս հարկն է... սա իմ հեղինակութիւնն է, միայն նիւթն է փոխ առած... համոզում էր նա:

— Այդ բանում կասկած չկէ կարող, պատասխանեցին նորան: — Միայն... դարձեալ... ոչ, ոչ, ոչ մի կերպ:

Եւ այսպէս նորան չյաջողեց պիեսը ընդունել տալ: Ահա այս տխուր միջադէպից յետոյ էր, որ սկսեցին Մողեստի մասին ասել, թէ նա լաւ մարդ է, միայն... և այլն:

Մողեստը ինչքան աշխատեց, ոչինչ չկարողացաւ անել: Ամենքը ժպտում էին նորան, թօթուած էին նորա ձեռքը, ասում էին, թէ հաւատում են նորա անմեղութեանը, բայց պիեսն ընդունել չէին ուզում: «Փուցէ յիրաւի ինքն է հեղինակել, մտածում էին տնօրէնները, միշտ դժուար բան հօ չէ. բիշ մարդ կայ որ պիես է գրում: Բայց վայ թէ յանկարծ երեայ, որ նա դարձեալ... Ո՛չ, թող իր բանին գնայ: Ինքը Մողեստ Ալօեվը ի հարկէ լաւ մարդ է, միայն... հմ... 2է, Աստուած բարի տայ իրան...»

Մողեստի աննախանձելի դրութիւնը կրիտիքական դառաւ: Ճաշել էլի մի կերպ կարողանում էր, որովհետև դաւառներից, ուր այնքան էլ չէ հետաքրքրում պիեսների հարադատութիւնը, երբեմն երբեմն ուղարկում էին նորան ութնական ուրբի, բայց նորա անդրափարտիքը էլ ամենևին բանի պէտք չէր և նա միանգամայն միջոց չուներ նորոգել: Փորձեց Մոսկվա երևալ, բայց այնտեղ, հէնց

որ իմացան, թէ Մողեստ Ալօեվն է, ամենքն էլ սկսեցին ծաղրել:

Ա, հա, հա, հա: Մողեստ Ալօեվ: Դա հէնց այն մարդն է որ առանց խաբելու չէ ծախում: հա, հա, հա:...

Մողեստն ականջները խցեց և փախաւ քաղաքի ամենահեռաւոր ծայրը: Նա յետին յուսահատութեան մէջ էր: Նա մտածում էր. «ինչի՞ համար: Ինչի՞ համար են հալածում ինձ: Կարծեմ ևս ոչ որի վիրաւորելու միտք չունիմ և ոչորից էլ բան խել: Ես միայն ուզում եմ մի կրտոր հաց գտնել և ուրիշ ոչինչ... Ես ինչո՞ւ եմ ուրիշներից պակաս և ինչո՞ւ ուրիշներին կարելի է, իսկ ինձ չի կարելի մի կտոր հաց վաստակել: Օրինակ հէնց իմ եղբայր Ղուկասը: Նա էլ ինձպէս չգիտէ թէ ուր պէտք է գնել ծառ տառը, և միայն մշակել գիտէ, իսկ ես այդ չըզդիտէի, ահա ամբողջ տարբերութիւնը իմ ու նորա մէջ... Ախ, անխ: Ո՛ր է արդարութիւնը:

Եւ այն միջոցին, երբ Մողեստը խորին յուսահատութեան մէջ էր ընկղմուած, յանկարծ մի մեծ միտք ծագեց նորա մէջ.

— Գաւառում: Գաւառում, գոռաց նա բոլոր ուժով, և ուրախութիւնից մինչև անգամ թռչկոտաց, որ այս միտքը ծագեց նորա մէջ. «էլ ի՞նչ էի երկար մտածում: Մայրաքաղաքներն ինձ չգնահատեցին... Ախ հպարտ, գոռոզ մայրաքաղաքներ: Նոքա վաղուց հրաժարուել են ինձ կերակրելուց. իսկ գաւառը, ոչ-ոչ, էլի նա է ինձ մտաբերում և ութն ուսուցում ծանուցապիւր զրկում: Ոհ բարի, սիրելի՛ գաւառ: Բայց ո՞ր կողմը: Ո՞ր քաղաքը գընամ: Բայց այդ միկնոյն է, բոլոր քաղաքները միապէս բարի են և պարզահոգի: Օն անգը ուրեմն դէպի գաւառ:

Եւ Մողեստը շոգեկառք ստեց ու գնաց: Չգիտեմ ինչո՞ւ և ինչպէս նա ընկաւ նահանգական Կօզօղոյ քաղաքը և ոտը կոխեց այնտեղ կեանքի մի նոր ասպարէզ:

Նահանգական Կօզօղոյ քաղաքում, ինչպէս և ամեն մի ուրիշ փոքր իշատէ իւր յարգը ճանաչող նահանգական քաղաքում ՚ի հարկէ դրամատիրական արուեստը սիրողների շրջան կար: Բայց, — այս էլ ՚ի հարկէ, — ոչ մի կարգ չկար այնտեղ: Սիրողները գործում էին իւրաքանչիւրն իւր խելքի կտրածի պէս. այս պատճառով ոչինչ չէր դուրս գալիս և ամեն ինչ գոյութիւն ունէր այնտեղ, բացի դրամատիրական արուեստից: Սիրողներն զգում էին ու հասկանում, որ դա տգեղ բան է, բայց ոչինչ չէին կարողանում անել, որովհետեւ գլխաւոր չունէին, որին նոքա աւելի յարգէին, քան իրանց կամակորութիւնները: Կարելի է երևակայել թէ ինչքան մեծ էր նոցա ուրախութիւնը, երբ իմացուեց, որ քաղաքը մի մարդ է եկել, Ալօեվ ազգանունով, — մի ազգ, որ այնքան յաճախ հանգիպել էր թատրոնական ափիշների վերայ: Նոքա ՚ի հարկէ չէին քրքրում և չէին էլ ցանկանում քրքրել թէ բանն ինչումն էր, և հէնց որ տեղական լրագրում մի լուր երևեցաւ, թէ եկել է այդ քաղաքը «մեր յայտնի թատերադիր Ալօեվը», այդ միկնոյն օրը մի պատգամաւորութիւն ժողովարանի կողմից առաջարկեց նորան բեմի անօրէնի տաշտօնը:

Մողեստը սկզբում զարմացաւ, բայց յետոյ գլուխը վեր բարձրացրեց: Նորան շատ էլ բարեյաջող հանգամանք չէր թւում, որ իւր անդրաւարտիքը շատ վատ վիճակի մէջ էր, իսկ կօշիկները ծռուած, բայց ՚ի նկատի առնելով իւր անուան թովշութիւնը, որ միկնոյն ժամանակ իւր եղբոր անուան էլ էր, նա որոշեց թքել այս հանգամանքի վերայ: Նա գնաց ժողովարան և մի ճառ խօսեց արուեստի վիճակի մասին և սրբութեան մասին, որին, ստաց, «մենք ամենքս ծառայում ենք», որպիսի ճառի հազիւ երբորդ մասը հասկացուեց, որովհետեւ, ինչպէս գիտենք, Մողեստը չէր կարող ինչպէս հարկն է արտասանել ուսուց աշակերտի



չորս ամենաշատն բաղաձայն տառերը: Սակայն ժողովարանի անդամները հիացած էին և բուռն ծափահարութիւններ նուիրեցին նորան: Այնուհետև Մոդէստը ձեռնարկեց բեմի տնօրէնութիւնը: Նա առաջարկեց ներկայացնել «2 խաբէս՝ չես ծախի» պիեսը և ներկայացնել տուեց, որովհետև անհնարին ոչինչ չկար այդտեղ: Սիրողները լաւ չներկայացրին, Մոդէստի տնօրէնութիւնը զգուշիւ էր, որովհետև ոչինչ հասկացողութիւն չունէր այդ արուեստից, բայց ամենքը լաւ էին տրամադրուած, իսկ ժողովարանի նպատակն ու ցանկութիւնն էլ այս էր: Այսպիսով ամենքը գոհ էին իրանցից և իրանց տնօրէնից: Այս անսպասելի յաջողութիւնը կարճ ժամանակ միայն տևեց Մոդէստի համար: «Այս բոլորը լաւ է: Զատ էլ հաճելի է, երբ քեզ ընդունում են ինչ որ իսկապէս դու չես, դժուար էլ յարգում են: Սակայն այդ յարգանքով վարտիկ չի առնուի»: Այսպէս էր գատում Մոդէստը և շատ էլ իրաւացի էր: Սիրողներն 'ի հարկէ ոչինչ չէին վճարում նորան տնօրէնի պաշտօնի համար: Նախ և առաջ ժողովարանը փող չունէր, ինչպէս և սիրողների ամեն մի ժողովարան, իսկ երկրորդ՝ ամենքը հաստատ համոզուած էին, որ պֆիշների վերայ այդքան յաճախ երեւացող յայտնի թատերադիրը, ինչպիսին Ալօեմն էր, չէր կարող փողի կարիք ունենալ: Նորա հարկաւ նորա հագուստը և ամբողջ արտաքինը դորան հակառակ արագացոյց էին համարում: Բայց այս բացատրում էր ուղղակի ինքնուրոյն սովորութեամբ: Կօզօդոյ նահանգական քաղաքում կարծիք կար տարածուած, թէ գրականութեամբ պարսկոյնները սովորաբար ման են գալիս գջլտուած, չսանդրուած և անուայ, — մի կարծիք, որ վաղուց արդէն չքացել էր ուրիշ ամեն տեղերում, բայց Կօզօդոյում դեռ գոյութիւն ունէր: Այս ամեն

նի շնորհիւ Մոդէստը, յաջողութեան մէջ թաղուած, միևնոյն ժամանակ սոված էր: Ելի մի կերպ ապրում էր, երբ իւր պիեսի կրկնութիւնները տեղի ունէին: Ժողովարանի բոլոր մարդիկ փողատէր էին և ուտել խմելու սիրողներ: Միջոցներում որևէ մէկի հաշուով անպատճառ օղի և նախաճաշ էր առնում, որից առաջին ճաշակն 'ի հարկէ առնում էր տնօրէնը: Սակայն կրկնութիւնները չուտով վերջացան և այնուհետև սկսուեցաւ կատարեալ սովի ժամանակ:

Ոչ մի կասկած չկայ, որ մարդկութիւնը շատ նշանաւոր գաղափարներով պարտական է քաղցին: Այս վերջինների և դատարկ ստամոքսի մէջ մի գաղտնի կապ կայ, և թէպէտ այն գաղափարը, որ յղացաւ Մոդէստը իւր այս քաղցածութեան օրերում, ամենեւին չբարւոյեց մարդկութեան վիճակը, այնուամենայնիւ սա մի զարմանալի գաղափար էր:

— Ինչո՞ւ ես... հմ... պրոֆեսսոր չդառնամ, հմ, գոչեց նա և ամենեւին չալչեցրին իրան իւր այս սեպհական խօսքերը: Առաջին նուազ սա մի փոքր խորթ կ[թուայ: Ի՞նչպէս կարող էր Մոդէստը, որ որևէ դպրոցի հազիւ երրորդ դասարան էր հասել և որ չէր կարողանում եւտտառը իւր տեղը գործ դնել, պրոֆեսսորութեան մասին մտածել: Բայց պէտք է 'ի նկատի առնել, որ Մոդէստը սոված էր, իսկ երբ մարդ սոված է, և այն էլ տեղադար, և ապագայումն էլ ճաշելու ոչ մի հնարաւորութիւն չէ տեսնում, արդարև ոչինչ զարմանալու բան չկայ, որ նա պատրաստ է նոյն իսկ պրոֆեսսոր դառնալ:

Իսկ եթէ այս էլ չլինի՝ Մոդէստի մտածումները հիմնաւոր էր: Կան այնպիսի գիտութիւններ, — իսկ գուցէ դժբա գիտութիւններ էլ չեն, — կամ արուեստներ, — և գուցէ դժբա արուեստներ էլ չեն, — ով գիտէ թէ ինչ բան են, — որոնց մէջ կարելի է պրոֆեսսոր լինել և դա-

սաւանդել, առանց մի բան գիտենալու և կարողանալու: Այդ տեսակ ճիւղերից մէկն էր ընտրել և Մողէստը:

Մի անգամ նա գնաց ժողովարանի նիստին և յայտնեց, թէ ցանկանում է ճառ խօսել: Այս գէպքերը միշտ աւելի հետաքրքրական են լինում և ամենքն ականջները սրեցին: Մողէստը վերկացաւ և ասաց.

«Տիկիններ և պարոններ: Կարճ ժամանակ ապրելով ձեր մէջ ես կարողացայ համոզուիլ, որ ձեր մէջ բեմական բազմաթիւ պատուական տաղանդներ կան: (Ունկնդիրներն աւելի սրեցին ականջները): Մանաւանդ ես այս եկատել եմ իմ «2խաբես՝ չեա ծախի» պիեսի ներկայացման ժամանակ: Սակայն ի մեծ ցաւ իմ սրտի պէտք է ասեմ, որ այս պատուական տաղանդները անհետ կկորչեն, եթէ նոցա պատշաճապէս չմշակեն: Իդուր չէ մեծ մարդը ասել (բայց սրբ), Աստուած է վկայ-չգիտեմ, մտածում էր նա այդ միջոցին). հանճարը — աշխատանքն է: Մենք այս կարող ենք և տաղանդի համար ասել, տաղանդը ոչինչ է առանց պատշաճաւոր մշակութեան: Այն ինչ ձեր ընտիր տաղանդներին հէնց այս բանն է պակաս. մշակութեան բացակայութիւնը: Ես որոշել եմ, տիկիններ և պարոններ, օգնութեան հասնել ձեզ և իմ բոլոր ոյժերս նուիրել այս գեղեցիկ գործին: Յայտնում եմ ձեզ, որ ես պատրաստ եմ, եթէ դուք էլ կցանկաք — ճարտարախօսութեան և դրամատիքական արուեստի կուրսեր բանաք...»

Մողէստին մինչև անգամ թոյլ չտուին, որ իւր առաջարկութիւնը պարզէ և ազդեցական «բրաւօ»: Այդ միտքը զարմանալի կերպով սիրողների ժողովարանի բոլոր անդամների սրտովն էր: Մողէստի այն խօսքերը, թէ ժողովարանում պատուական տաղանդներ գոյութիւն ունին, ամեն մէկը իւր վերայ ընդունեց, և ոչ որ իհարկէ չէր ցանկանում, որ իւր ընտիր տաղանդը անհետ կորչի:

Ոչ մէկի մտքովն անգամ չանցաւ զարմանք յայտնել,

թէ ինչպէս Մողէստը, որ չորս ամենաէական բաղաձայները արտասանելու չուր՝ չունէր, ճարտարախօսութիւն պիտի աւանդէր: Միևնոյնը չէ: Թող մէկը մի որևէ բան դասաւանդէ, որ մի հիմք լինի ուրևէ մանգալու և ինչպէս և իցէ անցկացնելու ոչորին և ոչ մի բանի պիտանի չեղող ժամանակը:

Մողէստի կուրսերին ոչ թէ միայն ամբողջ ժողովարանն էր յաճախում, այլ գտնուեցան նաև կողմնակի ցանկացողներ: Նա շատ համեստ վարձնշանակեց. վճարողները չէին նկատում անգամ թէ վճարում են: Նորան էլ շատ քիչ էր արդէն պէտք. մի կերպ կերակրուէր ու հագնուէր:

Այդ ժամանակից ամեն տարի սեզոնի սկզբին տեղական լրագրում առաջին երեսի վերայ երևում էր մի յայտարարութիւն, թէ «ճարտարախօսութեան և դրամատիքական արուեստի պրօֆէսսոր Մողէստ Դեմենտեովիչ Ալօեվը, այս ինչ սեզոններին, անցեալ տարիներին նման, նորոգում է ցանկացողների համար իւր սովորական կուրսերը»:

Մողէստեան այս որոշման հետևանքները անթիւ էին և անշափ բարբեր: Նոցանից գլխաւորը այն էր, որ Մողէստը այժմ արդէն մշտապէս կուշտ էր և հազնուած: Բայց կային և ուրիշները, օրինակ. նա այլ ևս չէր աշխատում ռուս թատրոնների բէպէրտուարը հարստացնել իւր հեղինակութիւններով, իսկ այս-պարզապէս աշխատանք էր թէ նորա և թէ արուեստի համար. նահանգական Կոզոգոյ քաղաքում, որ գտնուում էր որևէ մտաւոր կենդրոնից շատ հեռու, կազմակերպուեց սեպհական ճեմարանի պէս մի բան, և դեռ պրօֆէսսորով: Ամենայն հաւանականութեամբ կային և ուրիշ, ոչ պակաս բարբեր հետևանքներ, բայց մենք նոցա մասին ոչինչ չգիտենք:

Եւ այս ամենը տեղի ունեցաւ միմիայն այն հանգ-

մանքի չնորհիւ, որ Մողէստ Ալօեւը, որ լաւ մարդ էր չնչին թերութիւններով, պէտք է ինչ էլ որ լինէր վաստակէր մի կտոր հաց:



Ա. Ա շ խ ա տ ու թ իւ ն ն երը.

Աղօթատետր. բ. տպ. 1889	— 10
Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած.)	— 15
„ բ. տ. Գ. տպ. 1891	— 25
„ գ. տ. Գ. „ 1890	— 25
Տոմար եւ տօնացոյց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ բ. տպ. 1894	— 50
Կարնոյ գաղթը. պատմ. տեսութիւն, 1891	— 10
Դիւան Հայոց պատմ. գիրք Ա. Բ. 1780—1834 Սահ. Մեարոյ. մրցանակին արժանացած 1893	2 —
Դիւան Հայոց պատմութեան. գիրք Գ. Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը. կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով. Սահակ Մեարոյ. մրցանակին արժանացած, 1894	7 —
Կարգ Աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ. բ. տպ. 1895	— 40
Պատի օրացոյց ժամանակագրութեամբ. Ը. տարի, 1896	— 60

Բ. Թ ա ր գ մ ա ն ու թ իւ ն ն երը.

Հաւատարմութիւնն ամեն արգելքների յաղթում է. Գ. Հոփմանի. 1877	— 40
Խաւարից գէպի լըյո. Գ. Հոփմանի. 1877.	— 40
Գօն Բիշօտ լամանչեցի Մ. Սերփանէսի 1878 (սպառուած)	— 70
Գէորգ Ռուլէստոն, վէպ 1879	— 60
Երրորդ ոսկի, առակ Լակիդէի բ. տպ. 1893	— 10
Ռօբինզօն (Հրատ. Թիֆլիցի տպագր. ընկ.) 1881	— 60
Չէստերտօնի ժառանգը. պատկ. 1882	— 1
Ակտէա, տ. Սիսօեփայի 1885	— 50
Եան Էրնստ Սմլեար. Ն. Եանչուկի 1885	— 20
Արծուի մտածմունքը. պրօֆ. Մ. Բոգդանովի 1892	— 05
Գիւղի սուրբը, Սվետոպոլկ Չէխի, 1892	— 10
Կեանքի դպրոցը, Գիկկէնսի 1892	— 1
Գէպի լվթէնը. Սենկէւիչի, 1896	— 15
Մի կտոր հաց. Պօտապէնկօի. 1896	— 10


Գ. Հ ր ա տ ա ր ա կ ու թ իւ ն ն երը

Իս. Յարութիւնեան. Հայոց գիրք. 1893 Տփեիս.	1 50
Իշե. Կ. Բեհրուգեան. Դուլ. 1893	— 15
Ռանդաբէ. Իմսէ. վէպ. Թարգմանութիւն Յ. Լալայեանի	— 25
Ալբեր Այնօ. Գուրգի լեռն. Թարգմանութիւն 1894	— 25

Ճաղարէզեանց Յ. Հայոց լեզու ա. ա. դասագիրք հայ ծիւ. — 30
 դպր. համար 1894 — 15
 Սպիրի. Ալթարած Մանի. Թարգ. Իս. Յարութիւնեանց 1895 — 15

Լուսնայ. գրական հանդէս 1896. ա. գիրք. 2 —

Բացուած է „ԴԻԻԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏԱՌԻ-
 ԹԵԱՆ“ ժողովածուի Դ. և Ե. գրքերի բա-
 ժանորդագրութիւնը. Դ. գիրքը այս օրերս
 մամուլի տակ կ'մանի: 2 գիրքը արժէ 3 ռուբլի:
 Դիմել հրատարակչին կամ Կենտրոնական գրալիանոսանոցը:



Սոյն 1896 թ. յունուարից հրատարակուած է
 Տփխիսում

Լ Ո Ւ Մ Ա Յ

Գ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Է Ս

Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուարի 1-ին, իսկ
 երկրորդը՝ յուլիսի 1-ին:

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի քաժանորդագինն է 3 ռ.
 իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռ.

Ն ո ը Մ ա տ ե ն ա դ ա ը ա ն.

Խաւ Խաչիկ, պատմ. վեպիկ. Ս. Քամաղեանց 1894 . . . — 25
 Ֆերիզագէի երգը, փոքր Ասիայի կեանքից, Թարգ. Յ. Լա-
 լայեանց 1894 — 25
 Ղարիբ Մշեցի, պատկեր տաճկահայերի ներկայ կեանքից, 1894 — 10
 Հուրսէյ. Տարերք բնական գիտութեանց. Թարգ. Իս. Յա-
 րութիւնեանց Օժանդակ ձեռնարկ Հայ դպր. համար 1894 — 40
 Ճաղարէզեանց Յ. Վահան Մամիկոնեան 1894 . . . — 40
 Սպիրի. Ալթեան հովիւ. Թարգ. Իս. Յարութիւնեանց 1895 — 15
 Դիմել Կենդր. գրալիանոսանոցը կամ Լուսնայի կամբ.

4087

2013

2013

